

ՍՈՒՐԲ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐ ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ ԵՒ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

*Տեր վարդապետը նմանեցաւ Մովսէսին, Օրինաց գրքերը Հայաստան
բերելով եւ լուսաւորելով Թորգոմի որդիներուն սերունդը*

Չորրորդ դարուն վերջերուն Հայաստանը բաժնուած էր երկու հատուածներու. Արեւմտեան մասը ինկած էր Բիւզանդական տիրապետութեան տակ, իսկ Արեւելեան մասը Պարսից թագաւորութեան տիրապետութեան տակ: Պարսից տիրապետութեան օրով Արշակունեաց Վռամշապուհն էր թագաւորը, եւ այս բաժնին մէջ երկար ժամանակ խաղաղութիւն կը տիրէր եւ այդ պահուն էր որ կատարուեցաւ գիրերու գիւտը:

Վռամշապուհ թագաւորն ու Սահակ Պարթեւ կաթողիկոսը կը գիտակցէին որ Հայաստանը, բաժանումի պարագաներով, ծանր շրջանի մէջ էր եւ պէտք էր կառավարէին երկիրը, որովհետեւ ձիր ու ցան եղած հայութիւնը վտանգուած էր ձուլումի եւ կորուստի: Սահակ կաթողիկոսն ու Մեսրոպ Մաշտոց վարդապետը, Վռամշապուհ թագաւորի աջակցութեամբ գտան հայ ժողովուրդի պահպանման եւ հզօրացման անհրաժեշտ ամենակարեւոր զէնքը՝ հայկական գիրերը:

ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ՝ (348-438. Կաթողիկոս՝ 387էն սկսեալ). Ան որդին էր սուրբ Ներսէս հայրապետին. սուրբ Գրիգոր Լուսաւորիչի տոհմի վերջին առու շառաւիղը: Հայոց գիրերու գիւտին մէջ մեծ եղած է սուրբ Սահակ կաթողիկոսի դերը. անոր ջանքերով է որ Վռամշապուհ թագաւորը օժանդակեց սուրբ Մեսրոպ Մաշտոցին գիրերու գիւտի իր ճիգին մէջ, եւ անկէ ետք ալ դպրոցներ հիմնելու եւ թարգմանական աշխատանքներ կատարելու մէջ: Սահակ կաթողիկոսի եւ Մեսրոպ Մաշտոցի աշակերտները յետագային յունարէնէն թարգմանեցին Աստուածաշունչը եւ Աստուած սկսաւ հասկնալի դառնալ հայ ժողովուրդին:

Սուրբ Սահակը ձգած է մեծ ժառանգութիւն հայ դպրութեան մէջ. ան Մեսրոպ Մաշտոցի հետ միասին կազմած է ծեսերու եւ օրինութիւններու գիրքը, պատրաստեր է հայ եկեղեցւոյ տօնացոյցը, գրած է բազմաթիւ կանոններ, որոնք սահմանած են եկեղեցական եւ աշխարհիկ դասերու, պաշտօնեութեան փոխ յարաբերութիւններու, ամուսնա-ընտանեկան իրաւունքներու պայմանները: Գրած է շարականներ, ծիսական աղօթքներ: Ըստ Փարպեցիի վկայութեան, Մեսրոպ Մաշտոցն ու իր աշակերտները յաճախ կը դիմէին իր օգնութեան որովհետեւ ան լաւապէս կը տիրապետէր յունարէն լեզուին եւ անոր իմաստասիրական ճարտասանութեան:

Սուրբ Սահակի անունով մեզի հասած են նաեւ մի քանի թուղթեր ընդդէմ բորբորիտներու, նեստորականներու եւ մծղնեականներու աղանդներու. ինչ որ նաեւ իրողութիւն կը դարձնէ, որ նոյնիսկ այդ օրերէն գտնուած են

աղանդաւորական շարժումներ որոնք անհանգստացուցած են մեր եկեղեցին ու ժողովուրդը:

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

Ծնած է 362 թուին, Տարօն գաւառի Զացեկաց գիւղին մէջ. հօր անունն էր Վարդան: Իր կենսագիր Կորիւնի եւ միւս պատմիչներու համաձայն ան բարձր ուսում ստանալէ ետք, Տարօնի մէջ, կը մեկնի Վաղարշապատ եւ արքունիքին մէջ կը վարէ ատենադպիրի պաշտօնը ապա կը դառնայ գինուոր: Զակառակ իր պաշտօնին մէջ ունեցած բարձր վարկին ու յառաջդիմութեան, կը ձգէ եւ կը դառնայ կրօնաւոր, ինքզինք նուիրելով Սուրբ Գիրքի ուսումնասիրութեան ու քարոզչութեան, բան մը որուն կարիքը կը տեսնուէր ըլլայ թագաւորութեան ըլլայ եկեղեցւոյ մէջ:

Դառնալով կուսակրօն, իր աշակերտներուն հետ կը մեկնի Գողթան գաւառ ու կը սկսի քարոզել Աւետարանը. այդ ատեն է որ ան ամենէն աւելի կը զգայ հայերէն գրութիւններու բացակայութեան յարուցած դժուարութիւնը եւ սեփական լեզու մը ունենալու անհրաժեշտութիւնը: Զակառակ այս դժուարութիւններուն ան կը յաջողի դարձի բերել Գողթն գաւառի ամբողջ ժողովուրդը, սակայն հետզհետէ աւելի կը զգայ ան ձուլումի վտանգը որ կը սպառնայ հայ ժողովուրդին, երբ գրկուած է մայրենի լեզուով լսելու եւ հասկնալու Աստուծոյ խօսքը: Թեւեւ Պարսկական մասին մէջ քրիստոնէութիւնը արդէն հռչակուած էր որպէս պետական կրօնք, սակայն պարսիկներու հանդուրժողութիւնը մնայուն չէր կրնար ըլլալ: Այս իրավիճակը կը ներկայացնէ Կորիւնը այսպէս՝ ըրբ Գողթն գաւառի մէջ ան սերմանեց կրօնքի խօսքը, մեծ հրաշքեր պատահեցան եւ Մեսրոպ որոշեց քարոզել ամբողջ Զայաստանի տարածքին, մխիթարելու համար ժողովուրդը. սկսաւ աղօթել եւ բազկատարած խնդրել Աստուծմէ որ օգնէ իրեն այդ առաքելութիւնը իրականացնելու համար: Եւ այդպիսի հոգեկան վիճակի մը պահուն էր որ գտնուեցաւ լուծումը՝:

Մեսրոպ Մաշտոց կը վերադառնայ Վաղարշապատ, համոզուած որ Սահակ կաթողիկոսն ալ նոյն մտահոգութեան մէջ է. իրենց ծրագրին հաւանութիւն կուտայ Վռամշապուհ թագաւորը, եւ այս երեքի գործակցութիւնն է որ վերջապէս կը յաջողի իրականացնել գիւտը:

Սուրբ Մեսրոպ ծանօթ էր Դանիէլեան գիրերուն, անոնց միջոցաւ կը փորձէ կիրառել զանոնք, բայց ապարդիւն, որովհետեւ անոնք չէին կրնար արտայայտել հայերէն լեզուի բոլոր ձայնային հնչիւնները: Այս ձախողութենէն ետք Մեսրոպ դարձեալ կ'իյնայ իր մտորումներուն մէջ, եւ երկու սուրբերը միասին կը փորձեն նոր ուղիներ: Տեսնելով որ Զայաստան մնալով կարելի պիտի չըլլայ հայկական գիրեր գտնել, կ'որոշէ անձամբ անցնիլ Ասորիք եւ հոն պրպտումներ կատարել: Իր աշակերտներուն հետ կ'անցնի Եդեսիա, Սամոսատ եւ այլ վայրեր, հայերէն տառերը յօրինելու համար: Խորենացին այսպէս կը պատմէ այս մասին՝ " սուրբը կ'ապաւինի աղօթքին: Եւ կը տեսնէ ոչ քունի երագին, ոչ ալ արթնութեան ժամանակ տեսիլքի, այլ սրտի ու հոգեկան աչքերով կը տեսնէ Աջ ձեռք մը որ քարի մը

վրայ կը գրէ եւ անոր հետքերը կը մնան անոր վրայ իսկ բոլոր գիրերուն պատկերները կը դրոշմուին սուրբին մտքին մէջ: Աղօթքէն վեր կ'ելլէ, կը ստեղծէ մեր նշանագրերը, յունարէնի լաւատեղեակ Յռոփանոսի հետ ձեւակերպելով իր պատրաստած գրերն ու հայերէն տառերը եւ իրար նմանցնելով հնչիւնները: Անմիջապէս կը սկսին Ս. Գրքի թարգմանութեան , սկսելով Առակաց գրքէն":

Առաջին հայատառ նախադասութիւնը եղած է՝ **"Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ"**, գրուած առաջին հայ Ուսուցիչին ձեռքով: Այս է նաեւ Սուրբին առաջին պատգամը իր աշակերտներուն. իմաստութիւնը քրիստոսն է՝ Բանն Աստուած. Հանճարի խօսքերը՝ Սուրբ Գիրքը, որու խրատներով կը քալէ մարդը ճշմարտութեան եւ յոյսի ճանապարհով, քարոզելով այդ խօսքերը բոլոր ազգերուն:

Աստուածատուր այս գիւտէն ետք երանելի սուրբը կ'ուղեւորուի Հայաստան: Հայոց թագաւոր Վռամշապուհն ու Սուրբ Սահակ հայրապետը, լսելով սուրբ Մեսրոպի գալուստը, նախարարներով, իշխաններով եւ ժողովրդային մեծ բազմութեամբ կը դիմաւորեն զինք Վաղարշապատի մօտ: Համայն հայութեան համար ցնծութիւն էր:

Սուրբ Մեսրոպն ու իր աշակերտները իրենց ուղեկիցներով, ընդհանուր ցնծութեան եւ հոգեւոր փառաբանութեան մթնոլորտի մէջ կը մտնեն Վաղարշապատ: Մեր մատենագիրները սուրբին այս մուտքը կը նմանցնեն Մովսէսի Սինա լեռնէն իջնելուն, երբ ան աստուածային Տասնաբանեայ պատուիրանները քարտախտակի մը վրայ բերաւ: Այս ցնծութենէն քաջալերուած սուրբը անելի մեծ եռանդով կը շարունակէ իր սկսած գործը՝ Աստուածաշունչի թարգմանութիւնը:

Քիչ ժամանակ եւս մնալէ ետք Վաղարշապատի մէջ, երանելի սուրբը իր աշակերտներուն հետ կը սկսի քարոզչական գործունեութեան Հայաստանի ամբողջ տարածքին եւ հարեւան երկիրներուն մէջ, հայերէն քարոզելով Աստուածաշունչը, իր շուրջ հաւաքելով երիտասարդներու բանակներ, որոնք իրենց կարգին գործի լծուելով կը թարգմանէին իրենց ժամանակներու լաւագոյն գործերն ու յաճախ ալ ստեղծելով ուրոյն երկեր:

Երանելի սուրբը կը մահամայ 438 թուին, Փետրուար 17ին, սուրբ Սահակի մահուընէ քանի մը ամիս ետք:

Պատմագիրը այսպէս կը ներկայացնէ սուրբին վերջին վայրկեանները. "Երբ Աստուծոյ մարդը՝ սուրբ Մեսրոպ զգաց որ հասած է իր կանչուելու, իրենիկներէն բաժանուելու եւ քրիստոսի գունդին միանալու ժամը, իր թելերը դէպի երկինք կը տարածէ եւ կը խնդրէ Աստուծմէ որ իր շնորհքը եւ օգնութիւնը տարածէ բոլոր մնացողներուն վրայ. Սուրբը իր վերջին ողջոյնը տալով իր մօտ հաւաքուածներուն, անոնց կը կտակէ սէր եւ միաբանութիւն եւ օրհնելով մօտիկ եւ հեռու գտնուողներուն կ'աւանդէ իր հոգին Փրկիչի ձեռքերուն մէջ":